Ему Стрельцову

Стрельцовскому

медик-ин-стоматологу

638
З-25

1940р

Հաստատված է Հայկ. ՍՍՀ Արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատի կողմից 4/III 1940 թ.

01 OCT 2010

ՀԱՅՄԵՏԱՔՍՐԵՍ

# ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ

## ԱԳՐՈ-ԶՈՈ-ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ

638
Հ-25

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՄԵՏԱՔՍՐԵՍԻ
ՅԵՐԵՎԱՆ 1940

22,955

Գրագիրը՝ Հ. Գաբրիելյան
Տեխ. խմբագիրը՝ Ա. Ոհանյան
Սրբագրիչ՝ Գ. Չրաղացպանյան

06 JUN 2013

9366
40

Պետհրատի I տպարան գլավլիտ Ա.—2270 տիրաժ 2000 պատվեր № 249

Бш Цупху а5 о9 297 3—40 т. 2000/6

# ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## 1. ԳՐԵՆԱՑԻ ԻՆԿՈՒԲԱՑԻԱՆ

1. Թթենու շերամի գրենան արթնացվում է միմիայն ինկուբատորիայում:

2. Ինկուբատորիայի շենքը պետք է լինի մաքուր, չոր, լուսավոր, ջերմաստիճանի պահպանման և ողափոխության հարմարություններով:

3. Գրենայի ինկուբացիան սկսելուց 5 օր առաջ շենքը պետք է մաքրել, սպիտակացնել և կահավորման հետ միասին ախտահանել Ֆորմալինի 4 տոկոսանոց լուծույթով:

4. Գրենայի ինկուբացիան տարվում է ինկուբացիոն սենյակի ջերմության հետզհետե բարձրացման ձևով, պահպանելով հարաբերական խոնավությունը 65–75 տոկոսի սահմաններում:

5. Գրենայի ինկուբացիայի ընթացքում ինկուբացիոն սենյակը հաճախակի պետք է ողափոխել, թույլ չտալով ջերմաստիճանի իջեցում:

6. Դուրս յեկած վորդերի հավաքելը և կչռումը կատարվում է ընդհանուր կարգով, համաձայն հատուկ հրահանգի:

## 2. ՇԵՐԱՄԱՏՈՒՆԸ ՑԵՎ ՆՐԱ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ

1. Շերամի վորդի կերակրումից 15 օր առաջ պետք է ընտրել և կահավորել շերամատունը:

2. Շերամի վորդի կերակրման համար, բացի հատուկ կառուցված շերամատներից և բնակելի շենքերից, կարելի յե ոգտագործել նաև մարագները, պահեստները և այլ շենքերը, յեթե վերջիններս համապատասխանում են կամ հարմարեցվում են վորդի կերակրման նորմալ պայմաններին:

3. Շերամատունը պետք է լինի չոր, լուսավոր, ողափոխության հարմարություններով և մաքուր՝ ինչպես ներսը, նույնպես և շենքի շրջապատը:

4. Շերամատունը պետք է հեռու լինի փոշոտ ճանապարհներից և շրջապատված չլինի խիտ ծառերով:

5. Շերամատան պատերը, առաստաղը և հատակը պետք է սվաղած լինեն (յեթե տախտակամած չեն), իսկ յեթե առաստաղը գերանածածկ է և այնտեղից հող է թափվում, այդ դեպքում պետք է առաստաղին ֆաներկա կամ թուղթ խփել:

6. Համայնական կերակրումների դեպքում (ինչպես գարնան, նույնպես և ամռան) վորդերի առաջին յերեք հասակները պետք է կերակրել այնպիսի

չենքերում, ուր հնարավոր է պահպանել պահանջվող ջերմություն, իսկ վերջին հասակներում կարելի է կերակրել թեթև տիպի չենքերում։

7. Մեկ տուփ (25 գրամ) գրենայից ստացած վորդերը կերակրելու համար 5-րդ հասակում պահանջվում է՝ ցեղացու կերակրումների դեպքում՝ 60–75 քառ. մետր, իսկ արդյունաբերական կերակրումների դեպքում՝ 45–50 քառ. մետր կերակրման տարածություն և վոչ պակաս 100 խոր. մետր ծավալ։

8. Շերամատունը պետք է վառարան ունենա, վորպեսզի հնարավոր լինի չենքում նորմալ ջերմաստիճան պահպանել։

9. Վորդը չի կարելի կերակրել հատակի վրա, այլ պետք է կերակրել 2–3 հարկանի կերակրման հատուկ դարակների վրա։ Դարակները լինում են ստանդարտ-պատրաստի կամ պատրաստվում են տեղում, ոգտագործելով փայտեղեն և յեղեգ, վորից գործում են չաթաններ,։

10. Շերամատունը պետք է ունենա ջերմաչափ (թերմոմետր յի նաև խոնավաչափ), սեղաններ, դանակ և տախտակ՝ տերևը կտրատելու համար, կողով՝ տերևները տեղափոխելու համար (վորդերի փոքր հասակում), սեկատոր, մկրատ, սղոց, թուղթ՝ վորդի տակը փռելու համար և ծակոտկեն թուղթ՝ (սյոմնիկ), վորը գործածվում է խշտիները փոխելու և վորդերին նոսրացնելու ժամանակ։

## 3. ՇԵՐԱՄԱՏԱՆ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ (ԴԵԶԻՆՖԵԿՑԻԱ)

1. Շերամատան և ինվենտարի (կահավորում) ախտահանումը պետք է կատարել նախորոք, կերակրումներն սկսելուց 10 որ առաջ։

2. Նախքան ախտահանումը չենքը պետք է ազատել կահավորումից, պատերը, առաստաղը, հատակը լավ մաքրել և կրով սպիտակացնել։

3. Կերակրման ինվենտարը դրսում լավ լվանալ, մաքրել, արևի տակ չորացնել, ապա ներս տանել և դասել շերամատան կենտրոնում։

4. Մինչև ախտահանումը ստուգել պատերը, դռները, պատուհանները, ճեղքեր և անցքեր լինելու դեպքում ամուր փակել և սվաղել։

5. Ախտահանումը կատարել ֆորմալինի 4 տոկոսանոց լուծույթով։ Մեկ տուփ գրենայի համար 100 խոր. մետր ծավալի համար 3 լիտր (40 տոկոսանոց) ֆորմալինը լցնել 30 լիտր ջրի մեջ, լավ խառնել, վորից հետո լցնել սրսկիչ մեքենայի (վերմորել) մեջ և ապա կատարել ախտահանում։

6. Սրսկել շերամատան պատերը, առաստաղը, հատակը, ինչպես նաև ինվենտարը։

7. Քանի վոր ֆորմալինի գոլորշին ազդում է մարդու աչքերի և ընչափողի վրա, ախտահանողը պետք է գործածի հակագազ և ախտահանի արագությամբ, յերկար չմնալով չենքում։ Հակագազ չլինելու դեպքում, ախտահանողը պետք է իր բերանը և քիթը կապի թաց շորով։

8. Ախտահանումն ավարտելուց հետո շերամատան դռներն ամուր փակել և այդպես թողնել 48 ժամ։



9. 48 ժամը լրանալուց հետո, շերամատան լուսամուտներն ու դռները պետք է լավ բաց անել և չենքն ոդափոխել։

10. Ախտահանումից 2–3 որ հետո միայն կարելի է այդ չենքում վորդ կերակրել։

11. Քանի վոր ֆորմալինի ազդեցությունը կախված է ջերմաստիճանից, ախտահանումը պետք է կատարել որվա տաք ժամերին կամ նախքան ախտահանումը չենքը տաքացնել վառարանով։

12. Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել այն չենքերի ախտահանման վրա, վորտեղ կերակրվելու է ցեղացու գրենա, ինչպես նաև այն շերամատների վրա, վորտեղ նախորդ տարվա կերակրումների ժամանակ նկատվել է վորևիցե հիվանդություն։

## 4. ՎՈՐԴԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

1. Շերամի վորդը կերակրելու համար վորդը (կամ գրենան) պետք է ստանալ միմիայն գրեն գործարաններից կամ շրջմետաքներից։ Խբատիվ արգելվում է տնային ձևով պատրաստած կամ կողմնակիորեն ձեռք բերված սերմից վորդ արթնացնել, քանի վոր այդ հանդիսանում է համաճարակային հիվանդությունների ոջախներից մեկը։

2. Արգելված սերմից ստացած վորդի կերակրումներ հայտնաբերելու դեպքում վորդը շերամապահ-հրահանդչի կողմից անհապաղ վոչնչացվում է, իսկ շերամպահը յենթարկվում է պատասխանատվության։

3. Մեկ տուփ գրենայից արթնացած վորդի կերակրման համար պահանջվում է հետևյալ կերակրման տարածությունը՝

| ՀԱՍԱԿՆԵՐ | ՑԵՂԱՑՈՒ | ԱՐՏՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ |
|---|---|---|
| Առաջին | 3—4 քառ. մետ. | 2—3 քառ. մետր |
| Յերկրորդ | 4—6 » » | 4—5 » » |
| Յերրորդ | 16—17 » » | 14—16 » » |
| Չորրորդ | 35—40 » » | 30—35 » » |
| Հինգերորդ | 60—75 » » | 45—50 » » |

4. Վորդերի կերակրման ընթացքում շերամատան ջերմաստիճանը և խոնավությունը պետք է լինի՝

| ՎՈՐԴԵՐԻ ՀԱՍԱԿԸ | ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՑԵԼՍԻ | ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ տոկոսներով |
|---|---|---|
| Առաջին | 24—25° | 70—75 |
| Յերկրորդ | 23—24° | 70—75 |
| Յերրորդ | 22—24° | 65—70 |
| Չորրորդ | 22—23° | 65—70 |
| Հինգերորդ | 21—22° | 60—70 |
| Հուսելու ժամանակ | 22—20° | 60—70 |

5. Խստորեն պետք է հետևել շերամատան ջերմաստիճանին։ Ջերմաստիճանը բարձրանալու դեպքում ուժեղացնել շերամատան ոդափոխությունը, իսկ իջնելու դեպքում վառարանը վառել։

6. Շերմատունն որվա ընթացքում պետք է մի քանի անգամ ոդափոխել, մանավանդ կերակրման վերջին հասակներում։

7. Որվա ընթացքում 1–2 անգամ շերամատունը մաքրել թաց ավելով։

8. Յեթե շերամապահն ստանում է տարբեր որերի դուրս յեկած, հետևապես տարբեր հասակի վորդեր, այդ դեպքում վորդերին պետք է հավասարացնել։

Վորդերի հավասարեցումը կատարվում է առաջին յերկու հասակների ընթացքում. վերջին որերին դուրս յեկած վորդերը տեղավորել վերին դարակում, վորտեղ ջերմաստիճանը բարձր է և կերակրել մյուսներից ավելի։

9. Վորդերը կերակրել՝

1–ին հասակում— կտրատած կամ ամբողջական տերևներով,
2–րդ հասակում— ամբողջական տերևներով,
3–րդ հասակում— կանաչ մանր ճյուղերով,
4–րդ և 5–րդ հասակներում— ամբողջական ճյուղերով

10. Վորդերին կեր (տերև) տալ՝

1–ին հասակում— 10–12 անգամ,
2–րդ հասակում— 8 անգամ,
3–րդ հասակում— 8 անգամ,
4–րդ հասակում— 6-7 անգամ,
5–րդ հասակում— 5-6 անգամ։

11. Յեկնելով ստախանովական շերամապահների փորձից՝ կիրառել դիշերային կերակրումներ, վորը զգալի չափով կրճատում է վորդերի կերակրման տևողությունը։

12. Քանի վոր բուժուժի բերքատվությունը մասամբ կախված է կերի հավասարաչափ դասավորումից, ինչպես դարակների վրա, նույնպես և որվա ընթացքում, ուստի վորդերին պետք է կերակրել որ ու դիշեր, հավասարաչափ դասավորելով կերը։

13. Վորդին կեր տալիս պետք է հաշվի առնել կերակրման պայմանները, այն է՝ ջերմությունը, խոնավությունը, տերևի վորակը և ապա տալ այն քանակով, վոր վորդերը լրիվ յուրացնեն կերն առանց մնացորդի։

14. Վորդերին տրված կերը պետք է լինի թարմ և մաքուր, յեթե տերևը փոշոտված է, անհրաժեշտ է մաքրել, իսկ յեթե անձրևներից թրջված է, անհրաժեշտ է բարակ շերտով ստվերում փռել, չորացնել և նոր տալ վորդին։

15. Մինչև տերևի քաղելն առավոտյան կերակրման համար պետք է ունենալ կերի պաշար։



16. Տերևը պետք է քաղել առավոտյան և յերեկոյան զով ժամերին։

17. Ամպամած որերին կերը կարելի յե քաղել ամբողջ որվա ընթացքում. անձրևային որերին կերը քաղելուց հետո անպայման չորացնել անձրևի կաթիլներից, վորից հետո միայն տալ վորդերին։

18. Կերը պետք է պահել վոչ թե շերամատանը, այլ առանձին տեղ, մանր ճյուղերը և տերևները թարմ պահելու նպատակով ծածկել թաց շորով, իսկ մեծ ճյուղերը պատերի մոտ դարսել ուղղահայաց և ծածկել խոնավ շորով։ Յեթե կերը շերամատանը պահվի՝ ջերմությունից շուտ կթառամի, ինչպես նաև կառաջացնի շերամատանը ավելորդ խոնավություն։

19. Հաճախակի պետք է փոխել վորդի տակի խշտիները, թույլ չտալ նրանց կուտակում. յուրաքանչյուր հասակում փոխել 1–2 անգամ քնից արթնանալու 2–րդ որը։

20. Հետևել, վոր վորդերը դարակների վրայից ցած չընկնեն, ընկնելու դեպքում վերցնել և նորից դնել դարակների վրա։

21. Վորդի տակից հանած խշտիները և աղբը դուրս տանել շերամատնից և այրել։

## 5. ՊԱՅՔԱՐԸ ՎՆԱՍԱՍՈՒՆԵՐԻ ԴԵՄ

Շերամատան վնասատուներից ամենավտանգավորներն են՝ մկները, մրջյունները, վայրի և ընտանի թռչունները, կրետները, ոձերը և կենդանիները։ Վնասատուների դեմ պայքարելու հիմնական միջոցներից են՝ շերամատներում աննդամթերքներ չպահելը, լուսամուտները ցանցապատելը, դռները փակ պահելը։

1. Պայքարը մկների դեմ՝

ա) Յեթե շերամատանը մկներ են յերևում, անհրաժեշտ է առաջին հերթին դտնել նրանց բները և փակել. կարելի յե բները ջարդված ապակի լցնել և ավազել։

բ) Դարակների վոտքերին անցկացնել ձագարաձև թիթեղներ։

գ) Շերամատանը մկներից ուժեղ չափով վնաս հասնելու դեպքում, ցուցումներ ստանալու համար դիմել շերամապահ–հրահանգչին կամ վնասատուների դեմ պայքարող հողաբժնի մասնագետին։

2. Պայքարը մրջյունների դեմ՝

ա) Կերակրման դարակները պետք է պատերից հեռու դնել։

բ) Դարակների վոտքերի տակ ջրով լցված ամաններ դնել։

գ) Դարակների վոտքերի շուրջը բլրաձև մոխրով պատել։

դ) Մրջյունների բները լցնել հետևյալ հեղուկով— մեկ դույլի մեջ լցնել 3 բաժակ տաք ջուր, նրան ավելացնել 35–40 գրամ մանրացրած սապոն և մեկ բաժակ նավթ, լավ խառնել մինչև փրփուր դառնալը, ապա ավելացնել ջուր՝ մինչև դույլի լցվելը։

յե) Կարելի յե նաև դարակների վոտքերին անիվի յուղ կամ մազութ քսել, հատակից 5–10 սանտիմետր բարձրությամբ, 3 ս. մ. լայնությամբ

հասա չերտով, իսկ յեթե դարակները կախված են առաստաղից, մաղութը կամ անիվի յուղն ողակաձև քսել պարաններին կամ յերկաթալարերին:

Կրետներից և թռչուններից վորդերին պահպանելու համար, չերամատան լուսամուտները ցանցապատել մետաղյա ցանցով կամ մարլայով:

4. Հավերին ու տնային կենդանիներին թույլ չտալ չերամատուն մըտնել:

## 6. ՎՈՐԴԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

Չերամի վորդի հիվանդություններից հայտնի յեն՝ պեբրինան, ֆլաշերին, դեղնացավը, չախլատը և մուսկարդինան:

1. Պեբրինայով վարակված վորդերը նիհարում և վոչընչանում են. այդ հիվանդության հիմնական նշաններն են՝ վորդերի չափազանց անհավասար լինելը և նրանց մարմնի վրա սև մանր բծերի առկայությունը: Վարակված վորդերը զրկվում են շարժվելու ընդունակությունից, մնալով խշտինների մեջ, մահանում են:

2. Ֆլաշերինը վտանգավոր համաճարակային հիվանդություն է, վորը 2–3 որվա ընթացքում կարող է վոչնչացնել ամբողջ կերակրումը: Հիվանդ վորդերը դադարում են ուտելուց, թուլանում են, ճգվում, սևանում և նմանվում են թուխ հեղուկով լցված պարկի. յերբեմն վորդերի բերանից հոսում է թուխ հեղուկ. այս հիվանդությունը մեծ մասամբ առաջանում է 4–5–րդ հասակներում:

3. Դեղնացավ հիվանդությունը յերևում է վորդի 3–րդ և 5–րդ հասակներում. առաջին դեպքում վորդերը դեղնում, նիհարում, դանդաղաշարժ են դառնում և կերն ախորժակով չեն ուտում: 2–րդ դեպքում հիվանդությունն արտահայտվում է յերկու ձևով՝ առաջին դեպքում վորդերը յերկարում են, շրջում են խշտինների մեջ մինչև մահանալը, վորից հետո սևանում են: 2–րդ դեպքում, ընդհակառակը, վորդերը կարճանում են ու հաստանում: Յերկու դեպքերումն էլ դեղին ցեղի վորդերը դեղնում են, սպիտակ ցեղի վորդերը կաթնագույն են դառնում: Ըստ ցեղի մա մ-նից հոսում է դեղին կամ կաթնագույն հեղուկ:

4. Զախլատ հիվանդության դեպքում վորդերը քիչ են ուտում, չեն մեծանում, մաշկը վինում է թառամած և ծածկված կնճիռներով, բայց վորդերն իրենց ախորժակը չեն կորցնում, անդամ հյուսում են բոժոժ:

5. Մուսկարդինայով հիվանդացած վորդերը թուլանում են, թոռմում, փոքրանում և մահանում: Մահանալուց հետո վորդի մարմինը չորանում և ծովելուց կոտրվում է: Վորդի փորիկի վրայի վոտները համարյա չեն նկատվում և դլուխն անճանաչելի յե դառնում:

Քանի վոր հիվանդությունները մեծ մասամբ առաջանում են տնային ձևով ստացած դրենայի (սերմի) վորդերի կերակրումից, վորդի վատ խնամքից, խշտինների կուտակումից, չերամատունը հաճախակի չողափոխելու հետևանքով ավելորդ խոնավության կուտակումից, անհրաժեշտ է հիվանդությունների դեմ պայքարելու համար դիմել հետևյալ միջոցառումներին՝

1. Չկերակրել տնային ձևով պատրաստած դրենայից արթնացած վորդեր:

2. Վորդերի մեջ վորևվե հիվանդության նշան նկատվելու դեպքում անմիջապես հայտնել շրջանային չերամապահ–հրահանգչին:

3. Հիվանդ վորդերի խշտիններն անմիջապես փոխել. թարմ կերի վրա բարձրացած առողջ վորդերին տեղափոխել նոր, ախտահանված շենք, իսկ հիվանդ և մահացած վորդերին իրենց խշտիններով և աղբով դուրս տանել չերամատնից և այրել:

4. Արդելել հիվանդ և մահացած վորդերով տնային թռչուններ կերակրելը:

5. Արդելվում է նաև վարակված չերամատներից ուրիշ չերամատներ անցնելը:

6. Վարակ չտարածելու նպատակով հիվանդ վորդերին տեղափոխելուց հետո ձեռքերը լավ լվանել, մաքրել, փոխել արտահագուստը, մաքրել և ախտահանել վարակված շենքն ու կահավորումը:

## 7. ԽՆԱՄՔԸ ԲՈԺՈԺ ՀՅՈՒՍԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

1. Վորդերը բոժոժ հյուսելու համար պետք է ոգտագործել այնպիսի բույսեր, վորոնք ունեն բավականաչափ ճյուղավորություն և չունեն փշեր ու հոտ:

2. Բոժոժավելը (ցախ) պետք է պատրաստել նախորոք, դեռ վորդի 3–րդ, 4–րդ հասակում, յուրաքանչյուր տուփի համար 400—500–ի հաշվով:

3. Բոժոժավելը հավաքելուց հետո լավ մաքրել ավելորդ ճյուղերից, չորացնել և փնջեր կապել:

4. Բոժոժավելը պետք է դնել այն ժամանակ, յերբ վորդն արդեն հասունացել է, բոժոժ հյուսելու տեղ է փնտրում և խշտինների մեջ նկատվում է նշաններ: Բոժոժավելի փնջերը պետք է դասավորել հավասար չարքերով, փունջը–փնջից 30 սանտիմետր հեռավորության վրա, այն հաշվով, վոր հնարավոր լինի հետամնաց վորդերին կերակրել:

5. Բոժոժի հյուսման 4–րդ որը հետամնաց վորդերին պետք է ջոկել և կերակրել առանձին:

6. Բոժոժ հյուսելու ժամանակ վորդերին չի կարելի ձեռք տալ, շարժել, տեղափոխել, վորովհետև դրանով ընդհատվում է բոժոժի հյուսումը և տեղի յե ունենում մետաքսի կորուստ:

## 8. ԲՈԺՈԺԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ ՅԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

1. Բոժոժի բերքահավաքը պետք է սկսել ցեղացու կերակրումների դեպքում վորդերի մասսայական բոժոժ հյուսելուց վոչ շուտ քան 9-րդ որը և վոչ ուշ քան 11-րդ որը, իսկ արդյունաբերական կերակրումների դեպքում՝ վորդերի մասսայական բոժոժ հյուսելուց 9-րդ որը:

Ծանոթություն.— Նշված ժամկետները պետք է ընդունել վորպես ընդհանուր դրված, սակայն յուրաքանչյուր դեպքում դեկավարվել շերամապահ-հրահանգչի ցուցմունքներով:

2. Յեթե բոժոժի հյուսումը տեղի յե ունեցել դարակներում դրված ցախերի վրա, բերքահավաքը պետք է սկսել ներքին հարկերից, հակառակ դեպքում վերևի հարկերի խշտիների մնացորդները և աղբը կթափվի ներքևի հարկերի բոժոժների վրա և կկեղտոտի նրանց:

3. Բերքահավաքն ավարտելուց հետո բոժոժը պետք է մաքրել բամբակից, տեսակավորել ըստ դույների, ջոկել սև չխարները և թույլ հյուսվածները, քանի վոր նրանք բոժոժի տեղափոխման ժամանակ կարող են ճզմվել և կեղտոտացնել բոժոժը, իջեցնելով նրանց վորակը:

4. Բոժոժը մաքրելուց և տեսակավորելուց հետո պետք է բարակ շերտով փռել չենքում չորի վրա:

5. Բոժոժը մթերման կետին հանձնել վոչ ուշ քան բոժոժաքաղի հաջորդ որը:

6. Բոժոժի տեղափոխումը կատարել առավոտյան և յերեկոյան հով ժամերին, կողովներում կամ ծակոտկեն արկղներում:

7. Չի թույլատրվում բոժոժը տեղափոխել պարկերում կամ սավաններում:

8. Չխար և թույլ բոժոժները հանձնել ընդունման կետին առանձին կողովներում:

## 9. ՎՈՐԴԻ ԱՄՌԱՆ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

1. Շերամի վորդի ամռան կերակրումների համար հատկացնել հիմնական տիպի չենքեր, վորտեղ կերակրման շրջանում հնարավոր լինի պահպանել պահանջվող ջերմությունը:

2. Շերամատունը պետք է լինի մաքուր և ողափոխության հարմարություններով, քանի վոր ամռան կերակրումները զուգադիպում են չոգերին և շերամատների ողափոխության պահանջն ավելանում է:

3. Շերամատների և կերակրման ինվենտարի ախտահանումը 100 տոկոսով պարտադիր է:

4. Շերամատների և ինվենտարի մաքրումը, լվանալը, սպիտակեցումը, ախտահանումը կատարվում է նույն ձևով, ինչ վոր գարնան կերակրումների ժամանակ:

5. Շերամատան ջերմաստիճանը և խոնավությունն ըստ հասակների պետք է լինի՝



| ՀԱՍԱԿՆԵՐ | ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ (Ցելսի) | ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ Տոկոսը |
|---|---|---|
| Առաջին | 24—26° | 70—75 |
| Յերկրորդ | 24—26° | 70—75 |
| Յերրորդ | 24—.6 | 65—70 |
| Չորրորդ | 23—25° | 60—70 |
| Հինգերորդ | 23—25 | 60—65 |
| Հյուսելու ժամանակ | 21—23° | 60—65 |

6. Շերամատան ջերմաստիճանը բարձրացնելու դեպքում առավոտյան և յերեկոյան հովին լուսամուտներն ու դռները բաց անել, իսկ ցերեկները թաց վարագույրներ կախել, ջուր ցանել, ինչպես ներսը, նույնպես և շերամատան շրջապատում:

7. Վորդերին կերակրել հաճախակի, յերկու ժամը մեկ անգամ, բայց քիչ բաժիններով, քանի վոր ամռան բարձր ջերմաստիճանից տերևը շուտ է չորանում և լիովին չի ոգտագործվում վորդի կողմից:

8. Պաշարի համար հավաքած կերը թարմ պահելու նպատակով ճյուղերի կտրած կողմը դնել ջրի մեջ, իսկ մանր ճյուղերն ու տերևները ծածկել թաց սավաններով:

9. Լայն չափով կիրառել գիշերային կերակրումները, վոչ պակաս 2 անգամից:

10. Խշտիները փոխել յուրաքանչյուր հասակում 1-2 անգամ, վորդի քնից արթնանալու 2-րդ որը:

11. Առաջին և յերկրորդ հասակներում վորդերին կարելի յե կտրատած տերևներով կերակրել, 3-րդ հասակում ամբողջական տերևներով, իսկ 4-րդ և 5-րդ հասակներում կերը տալ ճյուղերով:

12. Վորդերը կերակրել անպայման դարակների վրա:

13. Խշտիները փոխելիս դործածել ծակոտկեն թուղթ:

14. Հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարը, ինչպես նաև մնացած բոլոր աշխատանքներն այն է՝ խնամքը բոժոժ հյուսելու շրջանում, բոժոժի բերքահավաքը և հանձնումը նույնն է, ինչ վոր գարնան կերակրումների ժամանակ:

## 10. ԹԹԵՆՈՒ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ

1. Շերամի վորդի կերակրման ժամանակ թթենիները միանգամից չեն պետք է ոգտագործել, այլ ոգտագործել նրանց աստիճանաբար:

2. Գարնանը մինչև ծառի ոգտագործումը կամ ոգտագործման ընթացքում ծառի պսակը մաքրել կոտրված, չորացած և հիվանդ ճյուղերից:

3. Վորդի առաջին հասակներում, առանց ճյուղերը վնասելու պոկել պսակի ծայրի մասում գտնվող և ընից դուրս յեկած ճյուղերի տերևները: Տերևները պոկել զգուշությամբ, չվնասելով բողբոջներն ու կեղևը:

15835

4. Վորդի 3-րդ հասակում կարել միայն ծառի պսակի մեջեն մասի այն մանր չիվերը, վորոնք խանգարում են միմյանց, միաժամանակ մաքրելով բնից դուրս յեկած ճյուղերը, կտրելով նրանց հիմքից:

5. Վորդի 4-րդ և 5-րդ հասակներում կտրել պսակի բոլոր միամյա չիվերը հիմքից, թողնելով 1-1,5 ս. մ. բարձրությամբ:

6. Ծառն ոգտագործելուց անմիջապես հետո ուղղել պսակը: Յեթե ոգտագործման ժամանակ ճյուղերը կանոնավոր չեն եավել, մնացել են ավելորդ մասեր կամ ճյուղերը կտրելուց մնասվել են, այդ դեպքում անհրաժեշտ է կանոնավոր կտրել, մաքրել ծառն ավելորդ հավելվածներից:

7. Թթենին ոգտագործելուց հետո անմիջապես ջրել և ծառերի շուրջը փորել:

8. Ոգտագործման ժամանակ թթենու հասած ճյուղերը սղոցել այդեղծական սղոցով, իսկ բարակ չիվերը կտրել սեկատորով: Չի թույլատրվում ճյուղերը կոտրել կացնով կամ այլ գործիքներով:

9. Կրկնակի (յերկրորդ) կերակրումների ժամանակ թթենիներն ոգտագործել ծառերն ավելորդ չիվերից մաքրելու սկզբունքով, ոգտագործելով բնից և արմատավզից դուրս յեկած ճյուղերը, մաքրելով պսակի հիմնական ճյուղերից դուրս յեկած բոլոր այն մանր չիվերը, վորոնք խանգարում են միմյանց: Բոլոր դեպքերում ճյուղերը կտրել հիմքից:

10. Կրկնակի (յերկրորդ) կերակրման դեպքում չի թույլատրվում կտրել և ոգտագործել հիմնական ճյուղերը, ինչպես նաև այդ ճյուղերի ծայրերից դուրս յեկած նոր չիվերը:

11. Բոլոր կտրվածքները մաքրել սուր դանակով, լավ հարթել և քսել մածիկ:

12. Իբրև մածիկ ոգտագործել՝ ա) Ֆարսիդի մածիկ, վորի կազմությունն է՝ 2 մաս տավարի թարմ աղբ, մեկ մաս կիր կամ գաջ, բ) չավրովի մածիկ, վորի կազմությունն է 50 մաս տավարի թարմ աղբ, 20 մաս կիր, 20,9 մաս փայտի մոխիր և 0,1 մաս կայծաքարի ավազ:

ՀՍՍՀ-ՍՍՀ



ՀՀ Ազգային գրադարան
NL0293986

22.955